# Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան
# 2011թ. ապրիլին
## /վերլուծություն/

2011թ. ապրիլին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16311 գործարքներ, որոնց քանակը 2011թ. մարտի համեմատ նվազել է 4.9%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ աճել՝ 5.5%-ով:

2011թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2011թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.




2011թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4006 օտարման գործարքների 78.1%-ը կազմել են առուվաճառքները, 21.3%-ը՝ նվիրատվությունները և 0.5%-ը՝ փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների քանակի 40.5%-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.2%-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2011թ. ապրիլին, 2011թ. մարտի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 0.6%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ՝ 3.2%-ով:

2011թ. ապրիլին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 69.0%-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2011թ. ապրիլին, 2011թ. մարտի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.5%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ՝ 26.8%-ով:

2011թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Վարչական շրջաններ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|
| | ապրիլ 2010թ. | ապրիլ 2011թ. | մարտ 2011թ. |
| Կենտրոն | 469200 | 447300 | 451600 |
| Արաբկիր | 389300 | 347400 | 348200 |
| Քանաքեռ-Զեյթուն | 288500 | 264200 | 269500 |
| Նոր-Նորք | 243000 | 225700 | 224800 |
| Ավան | 242500 | 232200 | 228200 |
| Էրեբունի | 251400 | 235400 | 234800 |
| Շենգավիթ | 256900 | 230800 | 233000 |
| Դավթաշեն | 277200 | 252000 | 255600 |
| Աջափնյակ | 242300 | 222000 | 221100 |
| Մալաթիա-Սեբաստիա | 245500 | 221900 | 219500 |
| Նուբարաշեն | 144500 | 149500 | 148000 |
| **Միջինը Երևանում /բացի Նորք-մարաշից/** | **277300** | **257100** | **257700** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. ապրիլին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. մարտի համեմատ, նվազել են 0.2%-ով:

2011թ. ապրիլին մարզերում վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 311 բնակարաններ, որոնց քանակը, 2011թ. մարտի համեմատ, նվազել է 17.7%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ աճել՝ 5.8%-ով:

2011թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

| Մարզեր | Քաղաքներ | Միջին գները /դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | ապրիլ 2010թ. | ապրիլ 2011թ. | մարտ 2011թ. |
| Արագածոտն | Աշտարակ | 142700 | 132400 | 137400 |
| | Ապարան | 45400 | 47400 | 47400 |
| | Թալին | 52800 | 58315 | 58500 |
| Արարատ | Արտաշատ | 93400 | 93700 | 91600 |
| | Մասիս | 130900 | 128200 | 130600 |
| | Վեդի | 94400 | 89900 | 93600 |
| | Արարատ | 85700 | 81300 | 83500 |
| Արմավիր | Վաղարշապատ | 162400 | 146000 | 148800 |
| | Արմավիր | 119500 | 121800 | 124000 |
| | Մեծամոր | 83800 | 84100 | 84000 |
| Գեղարքունիք | Սևան | 93300 | 89360 | 88900 |
| | Գավառ | 46400 | 49600 | 48600 |
| | Մարտունի | 86200 | 89500 | 87500 |
| | Վարդենիս | 33200 | 34700 | 32400 |
| | Ճամբարակ | 19500 | 23100 | 21200 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Լոռի | Վանաձոր | 93000 | 93600 | 90400 |
| | Ստեփանավան | 58200 | 64300 | 61600 |
| | Սպիտակ | 80700 | 83200 | 85800 |
| | Ալավերդի | 31600 | 36300 | 34500 |
| | Տաշիր | 35700 | 39300 | 38300 |
| | Թումանյան | 6100 | 12500 | 9400 |
| | Շամլուղ | 3400 | 7700 | 5700 |
| | Ախթալա | 14200 | 17800 | 16800 |
| Կոտայք | Աբովյան | 160600 | 141800 | 141700 |
| | Նոր Հաճն | 129700 | 125300 | 128200 |
| | Բյուրեղավան | 103300 | 105600 | 102600 |
| | Եղվարդ | 117400 | 105500 | 106800 |
| | Հրազդան | 62500 | 58800 | 60800 |
| | Ծաղկաձոր | 181500 | 184400 | 182000 |
| | Չարենցավան | 78100 | 75500 | 76600 |
| Շիրակ | Գյումրի | 120300 | 108100 | 109700 |
| | Արթիկ | 59400 | 62900 | 61200 |
| | Մարալիկ | 30800 | 32100 | 30200 |
| Սյունիք | Գորիս | 139600 | 130600 | 136900 |
| | Կապան | 100600 | 104700 | 101500 |
| | Սիսիան | 79000 | 86400 | 85000 |
| | Մեղրի | 58700 | 65500 | 63000 |
| | Ագարակ | 33500 | 36500 | 36500 |
| | Քաջարան | 59800 | 65200 | 62100 |
| | Դաստակերտ | 8000 | 8000 | 8000 |
| Վայոց Ձոր | Վայք | 72300 | 76700 | 73700 |
| | Եղեգնաձոր | 106800 | 108000 | 107900 |
| | Ջերմուկ | 114000 | 125200 | 125200 |
| Տավուշ | Դիլիջան | 102100 | 106600 | 106800 |
| | Իջևան | 138700 | 130400 | 132000 |
| | Բերդ | 42000 | 46200 | 44300 |
| | Նոյեմբերյան | 33900 | 37700 | 36200 |
| | Այրում | 24100 | 26200 | 25100 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2011թ. մարտի համեմատ, աճել են 0.4%-ով:

2011թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անհատական բնակելի տների 447 առուվաճառքի գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 117, մարզերում միասին վերցրած՝ 330: 2011թ. ապրիլին, 2011թ. մարտի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 20.8%-ով, ընդ որում Երևանում՝ 23.2%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 20.0%-ով: 2010թ. ապրիլի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 3.0%-ով, ընդ որում Երևանում նվազել է 25.9%-ով, իսկ մարզերում միասին վերցրած աճել՝ 8.9%-ով:

2011թ. ապրիլին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| **Վարչական շրջաններ** | **Միջին գները /դրամ/** | | |
|---|---|---|---|
| | **ապրիլ 2010թ.** | **ապրիլ 2011թ.** | **մարտ 2011թ.** |
| Կենտրոն | 487200 | 467000 | 471900 |
| Արաբկիր | 393000 | 378000 | 380600 |
| Քանաքեռ Զեյթուն | 293300 | 275400 | 280500 |
| Նորք Մարաշ | 286200 | 278000 | 280200 |

| | | | |
|---|---|---|---|
| Ավան | 247700 | 238200 | 240200 |
| Էրեբունի | 259400 | 236800 | 236200 |
| Շենգավիթ | 259400 | 240900 | 244300 |
| Դավթաշեն | 283400 | 265000 | 268700 |
| Աջափնյակ | 249000 | 234400 | 233400 |
| Մալաթիա Սեբաստիա | 246800 | 231900 | 229400 |
| Նուբարաշեն | 148100 | 150700 | 149200 |
| **Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)** | **286700** | **272400** | **274100** |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2011թ. ապրիլին անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. մարտի համեմատ, նվազել են 0.6%-ով:

2011թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1քմ մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

| **Մարզեր** | **Քաղաքներ** | **Միջին գները /դրամ/** | | |
|---|---|---|---|---|
| | | **ապրիլ 2010թ.** | **ապրիլ 2011թ.** | **մարտ 2011թ.** |
| Արագածոտն | Աշտարակ | 149500 | 136400 | 139900 |
| | Ապարան | 49400 | 48800 | 47800 |
| | Թալին | 56000 | 59400 | 59800 |
| Արարատ | Արտաշատ | 100900 | 103700 | 101500 |
| | Մասիս | 133300 | 132200 | 135500 |
| | Վեդի | 98200 | 92400 | 97200 |
| | Արարատ | 93600 | 83600 | 87500 |
| Արմավիր | Վաղարշապատ | 167700 | 163000 | 161600 |
| | Արմավիր | 126000 | 126200 | 129500 |
| Գեղարքունիք | Սևան | 96700 | 93300 | 95300 |
| | Գավառ | 49400 | 50600 | 51300 |
| | Մարտունի | 89200 | 90300 | 88500 |
| | Վարդենիս | 35500 | 36800 | 34600 |
| | Ճամբարակ | 21900 | 25900 | 23000 |
| Լոռի | Վանաձոր | 99000 | 103300 | 101100 |
| | Ստեփանավան | 61900 | 64800 | 62100 |
| | Սպիտակ | 84000 | 89600 | 86500 |
| | Ալավերդի | 35400 | 37000 | 36000 |
| | Տաշիր | 39300 | 43700 | 41600 |
| | Թումանյան | 10700 | 12900 | 10800 |
| | Շամլուղ | 7500 | 9000 | 8000 |
| | Ախթալա | 18200 | 18800 | 18300 |
| Կոտայք | Աբովյան | 171200 | 149400 | 155700 |
| | Նոր Հաճն | 135900 | 133400 | 134400 |
| | Բյուրեղավան | 109600 | 107400 | 107400 |
| | Եղվարդ | 128400 | 110800 | 112500 |
| | Հրազդան | 66800 | 64900 | 64500 |
| | Ծաղկաձոր | 310200 | 310000 | 315000 |
| | Չարենցավան | 81100 | 77300 | 78200 |
| Շիրակ | Գյումրի | 125100 | 119000 | 119900 |
| | Արթիկ | 62400 | 63200 | 62300 |
| | Մարալիկ | 32800 | 34400 | 32700 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Սյունիք | Գորիս | 144600 | 139200 | 143000 |
| | Կապան | 105100 | 106700 | 105400 |
| | Սիսիան | 84900 | 87200 | 85400 |
| | Մեղրի | 61800 | 66400 | 65700 |
| | Ագարակ | 35500 | 36900 | 36600 |
| | Դաստակերտ | 10500 | 10500 | 10500 |
| Վայոց Ձոր | Վայք | 75200 | 77300 | 74400 |
| | Եղեգնաձոր | 115200 | 115000 | 111600 |
| | Ջերմուկ | 120400 | 127000 | 123100 |
| Տավուշ | Դիլիջան | 106600 | 107800 | 108400 |
| | Իջևան | 142900 | 140000 | 133000 |
| | Բերդ | 44600 | 47500 | 45900 |
| | Նոյեմբերյան | 36000 | 38200 | 37600 |
| | Այրում | 26000 | 26900 | 26100 |

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2011թ. ապրիլին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1քմ մակերեսի շուկայական միջին գները /ներառյալ տնամերձի միավորի գինը/, 2011թ. մարտի համեմատ, աճել են 0.3%-ով:

Ընդհանուր առմամբ, 2011թ. ապրիլին հանրապետությունում օտարվել են 1317 միավոր /624.85 հա/ հողեր, որից Երևանում՝ 66 միավոր /6.43 հա/: Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 697 միավոր /566.90 հա/, որից Երևանում՝ 4 միավոր /0.37 հա/,
- բնակելի կառուցապատման հողեր՝ 465 միավոր /48.64 հա/, որից Երևանում՝ 53 միավոր /3.27 հա/,
- հասարակական կառուցապատման հողեր՝ 136 միավոր /7.58 հա/, որից Երևանում՝ 8 միավոր /2.62 հա/,
- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 12 միավոր /1.23 հա/, որից Երևանում՝ 1 միավոր /0.16 հա/,
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 4 միավոր /0.30 հա/ ,
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 3 միավոր /0.18 հա/:

2011թ. ապրիլին հանրապետությունում օտարված հողերից 1115 միավորի /538.03 հա/ նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 50 միավոր /5.14 հա/, նվիրատվության գործարքներ՝ 189 միավորի /81.51 հա/, որից Երևանում՝ 16 միավոր /1.29 հա/ և փոխանակության գործարքներ՝ 13 միավորի /5.31 հա/:

Հանրապետությունում 2011թ. ապրիլին, 2010թ. ապրիլի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 11.9%-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 7.6%-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 16.1%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 22.2%-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արարատի մարզում՝ 136.32 հա, որից 131.16 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 21.2%-ը կամ 236 գործարքներ /171.10 հա/ հանդիսացել են պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 1 գործարք /0.20 հա/, իսկ 78.3%-ը կամ 873 միավորը /366.89 հա/ հանդիսացել են մասնավոր սեփականության հողեր, որից Երևանում՝ 49 միավոր /4.94 հա/: 2011թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 6 գործարք /0.03 հա/, այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2011թ. ապրիլին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող

տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

| | ***Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող*** | | | | | | | | ***Մասնավոր սեփականություն հանդիսացող*** | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Գյուղատնտեսական նշանակության հողերի | | Արդյունաբերական օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | | | | | | բնակելի կառուցապատ /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապատ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.20 | 0 | 0.00 | 4 | 0.37 | 1 | 0.16 | 37 | 2.01 | 7 | 2.40 |
| Արագածոտն | 3 | 8.89 | 1 | 0.07 | 2 | 0.10 | 3 | 0.13 | 45 | 42.93 | 0 | 0.00 | 26 | 3.34 | 0 | 0.00 |
| Արարատ | 20 | 85.89 | 3 | 0.12 | 8 | 0.41 | 4 | 0.02 | 56 | 45.27 | 1 | 0.30 | 52 | 4.23 | 2 | 0.07 |
| Արմավիր | 15 | 46.67 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.32 | 73 | 70.96 | 0 | 0.00 | 47 | 4.54 | 1 | 0.005 |
| Գեղարքունիք | 1 | 1.20 | 1 | 0.32 | 6 | 0.39 | 4 | 0.34 | 98 | 43.42 | 0 | 0.00 | 18 | 2.05 | 4 | 0.14 |
| Լոռի | 1 | 0.14 | 1 | 0.06 | 6 | 0.45 | 7 | 0.11 | 74 | 41.35 | 0 | 0.00 | 41 | 5.11 | 4 | 0.51 |
| Կոտայք | 15 | 14.62 | 0 | 0.00 | 38 | 3.09 | 38 | 0.80 | 78 | 25.14 | 0 | 0.00 | 69 | 10.59 | 10 | 1.05 |
| Շիրակ | 2 | 4.39 | 1 | 0.03 | 6 | 0.14 | 7 | 0.12 | 44 | 34.94 | 2 | 0.10 | 15 | 1.12 | 1 | 0.03 |
| Սյունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.20 | 5 | 0.09 | 17 | 9.95 | 0 | 0.00 | 6 | 0.69 | 3 | 0.14 |
| Վայոց Ձոր | 3 | 0.55 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 9 | 0.05 | 8 | 3.43 | 0 | 0.00 | 3 | 0.26 | 4 | 0.13 |
| Տավուշ | 0 | 0.00 | 0 | 0.00 | 8 | 0.33 | 5 | 0.69 | 12 | 9.37 | 0 | 0.00 | 6 | 0.48 | 0 | 0.00 |
| Ընդամենը | 60 | 162.35 | 7 | 0.60 | 79 | 5.31 | 87 | 2.67 | 509 | 327.13 | 4 | 0.56 | 320 | 34.42 | 36 | 4.48 |

Ստորև ներկայացվում է 2011թ. ապրիլին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

| | ***Ուղղակի վաճառք*** | | | | | | | | ***Աճուրդ վաճառք*** | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Ընդամենը | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | | Ընդամենը | | Գյուղ. նշանակության հողերի | | Արդյունաբ. օբյեկտների հողեր | | Բնակավայրերի հողեր | | | |
| | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | | | | | | | | բնակելի կառուցապ. /տնամերձ/ հողերի | | հասարակական կառուցապ. հողերի | |
| | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ | Միավոր | Մակերեսը /հա/ |
| Երևան | 1 | 0.20 | 0 | 0.00 | 1 | 0.20 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 |
| Արագածոտն | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 9 | 9.19 | 3 | 8.89 | 1 | 0.07 | 2 | 0.10 | 3 | 0.13 |
| Արարատ | 1 | 0.06 | 1 | 0.06 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 34 | 86.38 | 20 | 85.89 | 2 | 0.06 | 8 | 0.41 | 4 | 0.02 |
| Արմավիր | 1 | 0.007 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.007 | 19 | 46.98 | 15 | 46.67 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.31 |
| Գեղարքունիք | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 12 | 2.25 | 1 | 1.20 | 1 | 0.32 | 6 | 0.39 | 4 | 0.34 |
| Լոռի | 7 | 0.145 | 1 | 0.06 | 2 | 0.005 | 4 | 0.08 | 8 | 0.62 | 1 | 0.14 | 0 | 0.00 | 4 | 0.45 | 3 | 0.03 |
| Կոտայք | 19 | 1.27 | 0 | 0.00 | 16 | 1.24 | 3 | 0.03 | 71 | 17.18 | 14 | 14.57 | 0 | 0.00 | 22 | 1.85 | 35 | 0.76 |
| Շիրակ | 3 | 0.07 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 3 | 0.07 | 13 | 4.60 | 2 | 4.39 | 1 | 0.03 | 6 | 0.14 | 4 | 0.05 |
| Սյունիք | 1 | 0.05 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 1 | 0.05 | 8 | 0.24 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 4 | 0.20 | 4 | 0.04 |
| Վայոց Ձոր | 2 | 0.005 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 2 | 0.005 | 10 | 0.59 | 3 | 0.55 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 7 | 0.04 |
| Տավուշ | 7 | 0.76 | 0 | 0.00 | 3 | 0.08 | 4 | 0.68 | 6 | 0.27 | 0 | 0.00 | 0 | 0.00 | 5 | 0.25 | 1 | 0.02 |
| **Ընդամենը** | **42** | **2.57** | **2** | **0.12** | **22** | **1.53** | **18** | **0.92** | **190** | **168.30** | **59** | **162.30** | **5** | **0.48** | **57** | **3.79** | **69** | **1.74** |

Հանրապետությունում 2011թ. ապրիլին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք /0.05 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2011թ. ապրիլին, 2010թ. ապրիլի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակը նվազել է 28.3%-ով: Ընդ որում, Երևանում մնացել է անփոփոխ, իսկ մարզերում միասին վերցրած՝ նվազել 28.3%-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 40.5%-ով, բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի նկատմամբ նվազել է 58.7%-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 12.7%-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 28.6%-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում են գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /հա / | արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | 1 | 0.52 | 106.0 | 106.0 | 106.0 | 32 | 17.17 | 365.0 | 12000.0 | 4343.8 |
| Ապարան | | | | | | | | 86.5 | 2727.3 | 616.6 |
| Թալին | 2 | 8.37 | 75.2 | 212.6 | 143.9 | 11 | 11.52 | 93.6 | 5494.5 | 565.7 |
| Ծաղկահովիտ | | | | | | 2 | 14.24 | 79.5 | 1000.0 | 205.5 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 10 | 1.64 | 335.1 | 10833.3 | 2563.0 |
| Մասիս | 20 | 85.89 | 63.3 | 305.0 | 118.1 | 24 | 16.21 | 200.0 | 11904.8 | 2831.2 |
| Վեդի | | | | | | 22 | 27.42 | 207.0 | 10795.1 | 1785.6 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | 6 | 16.85 | 35.7 | 1630.4 | 813.7 | 27 | 13.99 | 294.3 | 9090.0 | 1510.2 |
| Բաղրամյան | 5 | 23.92 | 67.5 | 696.9 | 252.8 | 31 | 47.46 | 90.6 | 2561.1 | 775.4 |
| Վաղարշապատ | 4 | 5.90 | 61.6 | 63.1 | 62.6 | 13 | 8.66 | 444.4 | 11764.7 | 2900.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 73 | 16.89 | 199.8 | 1875.0 | 366.0 |
| Ճամբարակ | | | | | | 2 | 2.40 | 60.5 | 953.3 | 320.0 |
| Մարտունի | | | | | | | | 51.1 | 2850.0 | 693.5 |
| Սևան | 1 | 1.20 | 313.8 | 313.8 | 313.8 | 9 | 7.96 | 52.2 | 2134.8 | 285.7 |
| Վարդենիս | | | | | | 14 | 16.16 | 41.2 | 2575.1 | 393.4 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 0.14 | 1217.2 | 1217.2 | 1217.2 | 5 | 6.55 | 170.4 | 6424.2 | 804.6 |
| Գուգարք | | | | | | 6 | 1.01 | 234.6 | 6065.9 | 886.7 |
| Սպիտակ | | | | | | 1 | 0.13 | 250.0 | 5555.5 | 685.4 |
| Ստեփանավան | | | | | | 10 | 7.81 | 90.6 | 1686.6 | 293.5 |
| Տաշիր | | | | | | 51 | 25.65 | 45.3 | 1384.4 | 149.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 3 | 0.88 | 278.3 | 556.7 | 403.0 | 26 | 5.99 | 279.3 | 11942.7 | 4767.0 |
| Եղվարդ | 3 | 2.20 | 148.6 | 389.2 | 256.9 | 31 | 9.08 | 174.4 | 11971.8 | 3345.9 |
| Հրազդան | 8 | 11.49 | 165.3 | 840.8 | 620.4 | 18 | 8.58 | 130.5 | 10256.4 | 2000.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | | | | | | 9 | 4.90 | 252.0 | 1693.1 | 604.3 |
| Ամասիա | | | | | | 5 | 14.54 | 40.9 | 261.0 | 137.4 |
| Անի | 2 | 4.39 | 426.0 | 431.6 | 428.8 | 6 | 4.21 | 110.6 | 546.9 | 351.7 |
| Աշոցք | | | | | | 17 | 7.37 | 58.5 | 215.8 | 108.0 |
| Արթիկ | | | | | | 7 | 3.92 | 79.4 | 1428.6 | 325.0 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | | | | | | 2 | 2.20 | 92.6 | 1023.2 | 610.0 |
| Կապան | | | | | | 3 | 2.71 | 120.0 | 841.6 | 315.0 |
| Մեղրի | | | | | | 10 | 2.26 | 193.0 | 3000.0 | 670.0 |
| Սիսիան | | | | | | 2 | 2.78 | 46.3 | 1977.4 | 415.6 |
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | 3 | 0.55 | 107.5 | 333.3 | 240.3 | 6 | 2.60 | 125.0 | 10000.0 | 1775.5 |
| Վայք | | | | | | 2 | 0.83 | 58.8 | 1430.7 | 542.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | 2 | 0.41 | 213.3 | 3783.8 | 625.5 |
| Իջևան | | | | | | 1 | 0.62 | 267.5 | 9454.5 | 1175.5 |
| Նոյեմբերյան | | | | | | 9 | 8.35 | 46.7 | 7368.4 | 895.5 |

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

| Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը | Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդային վաճառքների | | | | | Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի վաճառքների | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | | Միավորների քանակը | Մակերեսը /քմ/ | արդյունքում ձևավորված շուկայական գները 1000 .0քմ մակերեսի հաշվարկով /հազար դրամ/ | | |
| | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին | | | Նվազագույն | Առավելագույն | Միջին |
| Արագածոտնի մարզ | | | | | | | | | | |
| Աշտարակ | | | | | | 18 | 17360.0 | 130.7 | 22200.0 | 2573.2 |
| Ապարան | | | | | | 1 | 235.0 | 124.1 | 609.6 | 320.5 |
| Թալին | 2 | 968.0 | 227.2 | 227.8 | 227.5 | 6 | 12150.0 | 63.2 | 1454.8 | 152.3 |
| Ծաղկահովիտ | | | | | | 1 | 3700.0 | 60.0 | 214.3 | 84.0 |
| Արարատի մարզ | | | | | | | | | | |
| Արտաշատ | | | | | | 3 | 3420.0 | 173.9 | 7140.3 | 894.0 |
| Մասիս | 8 | 4080.0 | 822.5 | 861.3 | 835.7 | 36 | 25513.0 | 187.5 | 25000.0 | 1210.6 |
| Վեդի | | | | | | 13 | 13341.0 | 126.1 | 5000.0 | 662.0 |
| Արմավիրի մարզ | | | | | | | | | | |
| Արմավիր | | | | | | 16 | 14103.0 | 131.6 | 9090.9 | 1215.0 |
| Բաղրամյան | | | | | | 2 | 2230.0 | 100.0 | 833.3 | 218.0 |
| Վաղարշապատ | | | | | | 28 | 27526.0 | 197.4 | 26528.4 | 1530.0 |
| Գեղարքունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գավառ | | | | | | 5 | 3176.0 | 186.6 | 1084.3 | 572.6 |
| Ճամբարակ | | | | | | | | 71.3 | 2286.2 | 149.3 |
| Մարտունի | | | | | | 11 | 14228.0 | 119.3 | 5000.0 | 275.3 |
| Սևան | 4 | 2356.7 | 372.6 | 485.0 | 433.4 | | | 240.0 | 3110.4 | 271.0 |
| Վարդենիս | 2 | 1587.0 | 115.0 | 115.0 | 115.0 | 2 | 3079.0 | 72.5 | 987.2 | 150.0 |
| Լոռու մարզ | | | | | | | | | | |
| Ալավերդի | 1 | 545.0 | 244.2 | 244.2 | 244.2 | | | 114.3 | 1388.9 | 215.2 |
| Գուգարք | 1 | 1000.0 | 79.2 | 79.2 | 48.5 | 8 | 5454.0 | 77.9 | 14083.3 | 944.8 |
| Սպիտակ | 2 | 2910.0 | 47.9 | 49.2 | 47.9 | 30 | 38850.0 | 104.9 | 1348.3 | 200.0 |
| Ստեփանավան | | | | | | 1 | 1405.0 | 88.2 | 1666.7 | 172.6 |
| Տաշիր | | | | | | 1 | 2500.0 | 45.3 | 400.0 | 85.5 |
| Կոտայքի մարզ | | | | | | | | | | |
| Աբովյան | 5 | 4450.0 | 410.0 | 1677.0 | 1329.1 | 43 | 84851.9 | 264.5 | 35353.5 | 1968.0 |
| Եղվարդ | 16 | 13439.0 | 2850.1 | 3819.2 | 3680.4 | 23 | 18140.0 | 173.6 | 27000.0 | 2838.4 |
| Հրազդան | 1 | 635.0 | 1962.2 | 1962.2 | 1962.2 | 2 | 1750.0 | 117.7 | 34848.5 | 1323.0 |
| Շիրակի մարզ | | | | | | | | | | |
| Ախուրյան | 4 | 607.0 | 1312.5 | 6693.2 | 3700.5 | 6 | 3202.8 | 113.6 | 18750.0 | 331.5 |
| Ամասիա | | | | | | | | 45.3 | 274.7 | 71.0 |
| Անի | | | | | | 2 | 2910.0 | 67.9 | 180.6 | 148.6 |
| Աշոցք | | | | | | | | 40.8 | 144.0 | 60.0 |
| Արթիկ | 2 | 800.0 | 200.0 | 200.0 | 200.0 | 7 | 5040.0 | 111.8 | 5000.0 | 216.5 |
| Սյունիքի մարզ | | | | | | | | | | |
| Գորիս | 4 | 2040.0 | 891.0 | 891.0 | 891.0 | 2 | 1730.0 | 112.2 | 1700.0 | 364.5 |
| Կապան | | | | | | 1 | 2660.0 | 67.9 | 2638.9 | 275.5 |
| Մեղրի | | | | | | 1 | 440.0 | 68.5 | 632.9 | 175.3 |
| Սիսիան | | | | | | 2 | 2066.0 | 123.5 | 875.0 | 185.3 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| Վայոց Ձորի մարզ | | | | | | | | | | |
| Եղեգնաձոր | | | | | | 3 | 2619.0 | 96.7 | 7659.6 | 497.2 |
| Վայք | | | | | | | | 120.7 | 1448.3 | 192.3 |
| Տավուշի մարզ | | | | | | | | | | |
| Բերդ | | | | | | | | 75.8 | 810.0 | 100.0 |
| Իջևան | 5 | 2455.0 | 3000.0 | 3000.0 | 3000.0 | 4 | 2850.0 | 74.1 | 14423.1 | 502.9 |
| Նոյեմբերյան | | | | | | 1 | 980.0 | 125.0 | 1948.1 | 203.5 |

2011թ. ապրիլին հանրապետությունում հողերի նկատմամբ գրանցվել է նախկինում անհատույց սեփականաշնորհման 4 գործարքներ 0.33 հա մակերեսով, ընդ որում 2-ը՝ /0.07 հա/ Կոտայքի և 1-ական՝ /0.05 հա/ Արարատի, /0.21 հա/ Տավուշի մարզերում:

2011թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 772 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.7%-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 91.1%-ն իրականացվել են իրավաբանական անձանց կողմից:

2011թ. ապրիլին, 2011թ. մարտի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը նվազել է 10.0%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ ՝ 19.2%-ով:

2011թ. ապրիլին հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 48 բնակարանների, 29 անհատական բնակելի տների, 387 հասարակական, 80 արտադրական նշանակության օբյեկտների, 220 միավոր /490.89 հա/ հողերի, 7 ավտոտնակների և 1 այգետնակների վարձակալության գործարքներ: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2011թ. ապրիլին Երևան քաղաքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքների քանակը 2011թ. մարտի համեմատ նվազել է 62.5%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ՝ 50.0%-ով: 2011թ. ապրիլին հանրապետությունում վարձակալված 490.89 հա հողերից 0.10 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 490.79 հա հողերից 84.76 հա կազմում են արդյունաբերական օբյեկտների, 1.03 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Գեղարքունիքի մարզում՝ 143.01 հա, որից 141.56 հա գյուղատնտեսական նշանակության: 2011թ. ապրիլին հանրապետության մարզերում վարձակալվել են 400.42 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

Ստորև ներկայացվում է 2011թ. ապրիլին հանրապետության մարզերում գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունը.

| **Մարզի անվանումը** | **Վարձակալության գործարքների քանակները** /միավոր/ | **Վարձակալված հողերի մակերեսները** /հա/ |
|---|---|---|
| Արագածոտն | 4 | 4.81 |
| Արարատ | 5 | 112.62 |
| Արմավիր | 3 | 3.57 |
| Գեղարքունիք | 44 | 141.56 |
| Լոռի | 11 | 14.86 |
| Կոտայք | 5 | 50.34 |
| Շիրակ | 23 | 42.43 |
| Սյունիք | 19 | 26.98 |
| Վայոց Ձոր | 2 | 3.23 |
| Տավուշ | 1 | 0.02 |
| **Ընդամենը** | **117** | **400.42** |

2011թ. ապրիլին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 2405 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 14.7%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. մարտի համեմատ, նվազել է 5.1%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ աճել՝ 18.7%-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /46.1%/, առանձնատների /25.7%/, հասարակական նշանակության օբյեկտների /11.7%/ և հողերի /11.4%/ նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1065 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2011թ. մարտի համեմատ, նվազել է 5.2%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ աճել՝ 18.7%-ով:

2011թ. ապրիլին հանրապետությունում գրավադրվել են 4771.32 հա հողեր, որից 3.59 հա՝ Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 99.7%-ը կամ 4755.49 հա գյուղատնտեսական նշանակության են, որը 0.31 հա՝ Երևանում: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արմավիրի մարզում՝ 4618.02 հա, որից 4617.49 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2011թ. ապրիլին հանրապետությունում իրականացվել են հիփոթեքային գրավադրման 216 գործարքներ, որից 171-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 81.9%-ն իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 13.9%-ն՝ անհատական բնակելի տների, 2.3%-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների և 0.5-ական%-ը՝ ավտոտնակների, հողերի և գյուղատնտեսական նշանակության հողերի և 0.9%-ը՝ այգետնակների նկատմամբ: 2011թ. մարտի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը նվազել է 16.0%-ով, ընդ որում Երևանում՝ 9.0%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ 34.8%-ով: 2010թ. ապրիլի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 16.1%-ով, ընդ որում Երևանում՝ 21.3%-ով, իսկ մարզերում միասին վերցրած՝ մնացել է անփոփոխ:

2011թ. ապրիլին հանրապետությունում ապապետականացման միջոցով մասնավորեցման գործարքներ չեն արձանագրվել:

2011թ. ապրիլին հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 3012 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը 2011թ. մարտի համեմատ աճել է 12.2%-ով, իսկ 2010թ. ապրիլի համեմատ՝ 24.9%-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 18.5%: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /26.5%/:

***ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե***